# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 463 Ա
«26» դեկտեմբերի 2025թ

ք.Արտաշատ

## ՎԵԴԻ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արտաշատ համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 25-ի Ե-6512 և Վեդի համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի N4754 գրությունները.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Կապիտալ սուբվենցիայի տրամադրման պայմանագրերով հաստատված, սակայն դեռ չֆինանսավորված գումարները որպես կանխավճար փոխանցել Արտաշատ և Վեդի համայնքներին՝ համապատասխանաբար 227454121 (երկու հարյուր քսանյոթ միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար մեկ հարյուր քսանմեկ) և 217906388 (երկու հարյուր տասնյոթ միլիոն ինը հարյուր վեց հազար երեք հարյուր ութսունութ) ՀՀ դրամ:

2. Հանձնարարել ֆինանսական վարչության պետ Լեռնիկ Խաչատրյանին ապահովել որոշման կատարումը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826

ՄԱՐԶՊԵՏ՝ Ս. ԹԵՎՈՆՅԱՆ